

որպէսզի դատաւարութեան ժամանակ միակողմանիութիւն չլինի հոգևորականների կողմից:

Այդպիսի հեռաեսն օրէնստրութիւնը արեւելեան պատրիարքների կողմից կանոնական ընթացք են ստացել հնում. Հին արեւելեան եկեղեցում միշտ հոգևորական և աշխարհական միասին են գործել, իսկ այժմ թէ Ռուսաց և թէ Հայոց հոգևոր ատեանների կազմը բաղկացած է միայն հոգևորական անձերից: Առաջ Ռ. Սինոզի կազմի մէջ մտնում էին և քահանայք, իսկ այժմ այդ ես չկայ: Բենեզևիլիչի ուսումնասիրութիւնը միանգամայն ցոյց տուեց՝ որ այժմեան հոգևոր կառավարութեան եղանակն է ոչ թէ Մեծն Պետրոսի ընդունածը, այլ և Պրոկոպովիչի, հետևապէս մեծ կարիք կայ մի եկեղեցական ժողովի՝ վերականգնելու հոգևոր օրէնստրութեան մէջ իսկականը և ուղղափառ եկեղեցուն յատուկ ուղիղ եղանակը:

Կ Ա Ք Ո Ւ Լ Ի Կ Ե Կ Ե Ղ Ե Յ Ի

Պիոս X-ի մահը: Օգոստոսի 7-ին գիշերուայ ժամը 1 և 20 րոպէին 79 տարեկան հասակում վախճանուեց Պիոս տասերորդ Պապը: Նորա մահը անակրեկալ չէր, ի նկատի առնելով որ վերջին ժամանակներս յաճախակի հիւանդանում էր: Պիոս իններորդ Պապից յետոյ 1903 թուին նա ընտրուեց Հռոմի պապ: Նորա իսկական անունն էր Զուգէպպէ Սարտո, պապ ընտրուելուց յետոյ ի յարգանս Պիոս IX-ի ընդունեց Պիոս X անունը: Յետագայում նորա բունած ընթացքից երևաց, որ ըստամենայնի համակիր է եղել նախորդի ուղղութեան: Պիոս X-ն իւր ընտրութիւնից յետոյ 1903 թուի նոյեմբերի 9-ին պաշտօնապէս յայտարարեց, որ ինքը պէտք է ընթանայ նախորդների շաւղով և մտադիր չէ հրաժարուել աշխարհային իշխանական ձգտումներից: Հռոմի շրջանում եւ երբ 1904 թ. Ֆրանսիայի հասարակապետութեան նախագահ Լուրէն Հռոմ մտաւ՝ Պիոս X պապը խիստ կերպով բողոքեց նորա գալստեան առթիւ՝ համարելով այդ իբրև վիրաւորանք սուրբ աթոռին: Իսկ այդ բողոքի հետևանքն էլ այն եղաւ որ Պապի և Լուրէի մէջ ծագած տարաձայնութիւնը վերջացաւ Ֆրանսիայում եկեղեցին պետութիւնից բաժանուելով: Պիոս պապը ծնուել է 1835 թ. Տրէվիզոյում, գիւղական ընտանիքում, սկզբում քահանայ է եղել և յետոյ 1884 թ. եպիսկոպոսական աթոռ ստացաւ Մանտուայում: 1893 թ. նշաճակուել է Վենետիկի պատրիարք և մինչոյն ժամանակ կարգինալի կոչում ստացաւ:

Վերջին ժամանակներս Պիոս X պապը՝ երբ Աւստրիան պատերազմ յայտարարեց Սերբիային՝ մի նամակով դիմեց Ֆրանց

Յովսէփին՝ խնդրելով յետ կանգնել արիւն թափելուց և ծերութեան օրերում իր «ալիքները չնեղիկ արիւնով», կաթոլիկ կայսրը մերժեց պապի այդ խաղաղարար պատմական կարևոր խնդիրը և երևի Պիոս X պապի անէծքը անհետանք չի մնալ Աւստրիայի կայսեր և նորա պետութեան համար:

«Հակաալգոհական Միջազգային կաթոլիկ լիգայ»ի 200 անդամներից մի խումբ ներկայացել են Պիոս X-րդ պապին, յայտնելով իրենց նպատակը ամեն կերպ կռուել ժողովրդի մէջ տարածուած արքեպոզուլթեան ախտի դէմ. Պապի գլխաւոր քարտուղար կարդինալ Միրրի դել Վալ՝ նոյն օրը նամակ է գրում հակաալգոհական լիգայի նախագահին և Պապի կողմից յայտնուած չնորհակալութիւն և օրհնութիւն քաջարի մարտիկներին, որոնք կազմել են խաչակրաց արշաւանք այն սոսկալի շարիքի դէմ, ինչպիսինն է արքեպոզուլթիւնը, որի դէմ կաթոլիկ հոգևորականութեան և առանձին ընկերութիւնների կողմից սկսուած է եռանդուն գործունէութիւն. կարդինար մատնանշում է այդ նամակի մէջ այն բոլոր շարիքները, որոնք առաջ են գալիս արքեպոզուլթիւնից ժողովրդի տնտեսական, բարոյական և ֆիզիքական կեանքի մէջ, որ արքեպոզուլթիւնը քաքայում է անհատի մէջ նորա և՛ առողջութիւնը, և՛ խելքը, և՛ խիղճը և՛ ազատութիւնը. Այնուհետև Պապը կարդինալի միջոցով ցանկութիւն է յայտնում, որ հոգևորականութիւնը ամեն տեղ աջակցի հակաալգոհական ընկերութիւններին, խօսքով և կենդանի օրինակով հասկացնեն հետո մնալու արքեպոզուլթիւնից և սրանից առաջացած շարիքներից:

Սոյն տարուայ օգոստոսի 7-ին լրանում է հարիւրամեակը Պիոս VII-ի վերականգնած եզուիտների կարգի (օրդեն)։ Այդ օրը, նոյնպէս և օգոստոսի 4, 5, 6-ին եզուիտների բոլոր եկեղեցիներում կկատարուին զոհաբանական մաղթանքը եզուիտների գլխաւոր Վերնցի խնդրի համաձայն, Պիոս X-ը իւր 23 յունվարի հրատարակած հրովարտակում յայտարարել է իրակատար ինչուլիցնցիա բոլոր հաւատացեալներին, որոնք վերոյիշեալ նշանակուած չորս օրերից մէկում կայցելեն որևէ եզուիտական եկեղեցի, որտեղ խոստովանութիւնից և հաղորդութիւնից յետոյ կաղօթեն կաթոլիկ թագաւորների համաձայնութեան, մեղաւորների զղջման և եկեղեցու բարձրացման համար:

Բ. Վ. Ա.